04708051
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ
ԱՆՎԱՆ N4 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ
հեռ.+374(0231)-5-43-67
ք.Վաղարշապատ, Սպանդարյան 29/1
էլ. փոստ vakharshapat4@mail.ru

04708051
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
<<ВАГАРШАПАТИ Х. АБОВЯНИ АНВАН
N4 ГИМНАКАН ДПРОЦ>> ГНО
тел. +374(0231)-5-43-67
г.Вагаршапат ул. Спандарян 29/1
эл. почта vakharshapat4@mail.ru

N121

10 նոյեմբերի 2025թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խաչատրյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2025թ. նոյեմբերի 10-ից <<Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առաջացել է դասվարի թափուր տեղ 17 դրույքային ժամով:

Կից ուղարկում եմ հայտարարության էջը:

Խնդրում ենք հրապարակել:

Առդիր 1 ֆայլ:

Դպրոցի տնօրեն Ա.Մուրադյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի մասին տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որոկավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. նոյեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 24-ին ժամը 14:00-ին ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Վաղարշապատ, Տիգրան Մեծ 29/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0231-5-43-67 հեռախոսահամարով:

*Դպրոցի տնօրեն՝ Ա. Մուրադյան*